# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Երևան 15, Արգիշտիի փողոց N°1


№ 15/01-92/3 «09» 08 2006թ.

Ձեր ______

## ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է առ այն, որ Երևանի քաղաքապետարանի կողմից թափառող կենդանիների ստերիլիզացման և վնասազերծման աշխատանքների իրականացման համար հայտարարված մրցույթում 17.04.2006թ.-ին երկու տարի ժամկետով հաղթող է ճանաչվել «Ցունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ն:

*Առևտրի և սպասարկումների վարչության պետ* Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## «Թափառող կենդանիների բուժման և ստերիլիզացիայի միջոցով վնասազերծման ծառայությունների »

### ԳԼԽԱՎՈՐ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՊՈԶԲ - 06/39

ք. Երևան «17» 04 2006թ.

«Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս Կազմակերպության պետի տեղակալ Ա. Մելիքյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից և «Ցոնիքայաֆ-Դոս» ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Փոփկյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված լրացուցիչ համաձայնագրերով (այսուհետ՝ Համաձայնագիր), որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը, սահմանված կարգով, նախատեսված ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատուցել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով նախատեսված թափառող կենդանիների բուժման և ստերիլիզացիայի միջոցով վնասազերծման ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:
1.2 Սույն պայմանագրի գործողության ժամկետը սահմանված է մինչև 2007 թվականի դեկտեմբերի 31-ը :

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Առանց Ծառայության արդյունքի դիմաց վճարում կատարելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը (Համաձայնագիրը) և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները, երբ Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և (կամ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3 Ընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանք և տույժը.

2.1.4 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի (Համաձայնագրի) կատարումից՝ Կատարողին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Ժամանակին և լրիվ ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս փաստացի կատարվածի դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 Սույն պայմանագրով սահմանված կարգով Կատարողին ծանուցել (տալ) Ստացողին կցելու մասին՝ կնքելով համապատասխան Համաձայնագիր:

2.2.4 Կատարողին տրամադրել սույն պայմանագրի 8.1 կետում նշված հաղորդակցության պատճենը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունել սույն պայմանագրին (Համաձայնագրին) համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը:

2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագրից (Համաձայնագրից) կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարել փաստացի մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.3 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի (Համաձայնագրի) կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման

արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով:

2.3.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարել իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով զգույշ ուշադրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը Ծառայության (Ծառայության առանձին փուլի) մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում փաստացի մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժում:

3.3 Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայության յուրաքանչյուր միավորի գինը, ներառյալ ԱԱՀ-ն, ներկայացված է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածում՝ Ծառայությունների մատուցման գնացուցակում: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները:

4.2 Ծառայության մատուցման գինը կարող է փոփոխվել կողմերի համաձայնությամբ:

Սույն պայմանագրով սահմանված յուրաքանչյուր միավորի գինը հաշվարկվում է հետևյալ սկզբունքով: ՀՀ-ում շուկայական գների զգալի տատանման դեպքում տեղի է ունենում գների վերահաշվարկ, եթե այդ տատանման արդյունքում գները պետք է 5 տոկոսով ավելի լինեն նախորդ ամսվա միջին շուկայական գնից: Պատվիրատուի կողմից Ծառայության ընթացիկ շուկայական գինը հաշվարկվում է՝ Հայաստանում տվյալ ոլորտում գործող առնվազն երեք կազմակերպությունների տվյալների այդ օրվա դրությամբ առաջարկվող գների հիման վրա: Պատվիրատուն գների հարցումը կատարում է գրավոր և վերջիններիս տրամադրած պատասխանի հիման վրա հաշվարկում և ծանուցում է Կատարողին Ծառայության գինը:

4.3 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա Համաձայնագրի համապատասխան հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 10-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար ֆինանսական ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի (Համաձայնագրի) լուծման, ինչպես նաև 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունվելու, Ծառայությունը չմատուցելու դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ համապատասխան Համաձայնագրի գնի 0,05%-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության արժեքի 0,05%-ի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայության մատուցման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ ուշացված յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պատասխանատվությունը

չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

6.1 Սույն պայմանագրի հիման վրա գնման պահանջ առաջանալու դեպքում Պատվիրատուն ծանուցում է այդ մասին Կատարողին՝ կցելով Համաձայնագրի նախագիծ և օժանդակ հավելվածների 2 օրինակ:

6.2 Ծանուցումը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը ստորագրում, կնքում և Պատվիրատուին է վերադարձնում 6.1 կետում նշված փաստաթղթերը:

6.3 Պատվիրատուն ստորագրում, կնքում և Կատարողի կողմից հաստատված Համաձայնագիրը, օժանդակ հավելվածները և դրանց մեկ օրինակը վերադարձնում է Կատարողին:

6.4 Համաձայնագրով նախատեսված Ծառայության մատուցումը սկսվում է Համաձայնագրով սահմանված ժամկետում:

6.5 Կարիք առաջանալու դեպքում կնքվում է Համաձայնագիր որում նշված գումարի սահմաններում Կատարողը պարտավորվում է իրականացնել սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված տեսակի ծառայություններ և փաստացի կատարվածի արդյունքը ներկայացնում է պատվիրատուին:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2007 թվականի դեկտեմբերի 31-ը :

Տվյալ գնման ընթացակարգի և պայմանագրի գնահատման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխանելու համար պատասխանատու մարմնի եզրակացության առկայությունը կամ նրա իրավունքների և պարտականությունների պահպանումն է:

Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պահանջի հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.2 Սույն պայմանագրում (Համաձայնագրում) փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր (Համաձայնագիր) կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի (Համաձայնագրի) անբաժանելի մասը:

8.3 Սույն պայմանագիրը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ:

8.4 Սույն պայմանագրի (Համաձայնագրի) կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.5 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3 հավելվածները, բաղկացած 3 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.6 Սույն պայմանագրից (Համաձայնագրից) ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պահանջի հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից (Համաձայնագրից) ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.7 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում են համապատասխան Համաձայնագրերում նշված Ստացողները:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ք. Երևան, Կոմիտասի պող. 54բ | ք. Երևան [illegible] |
| «Հայէկոնոմ[illegible]ի մ/ճ | «Հայինվեստ[illegible] |
| ՀՀ [illegible] | ՀՀ 11500[illegible] |
| | (ստորագրություն) |
| | 01554753 |